# ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՄԻԳՐԱՆՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

# ԻՍՊԱՆԻԱ




IOM • OIM

IOM International Organization for Migration
Միգրացիայի միջազգային կազմակերպություն (ՄՄԿ)
Հայաստանյան առաքելություն

# ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՄԻԳՐԱՆՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ ԻՍՊԱՆԻԱ

IOM • OIM

IOM International Organization for Migration
Միգրացիայի միջազգային կազմակերպություն (ՄՄԿ)
Հայաստանյան առաքելություն

ՄՄԿ

Սույն ուղեցույցը հրատարակվել է Իտալիայի Կառավարության ֆինանսավորմամբ:

© **Հեղինակային իրավունքը պաշտպանված է**: Սույն հրատարակության ոչ մի մաս չի կարող վերարտադրվել, պահպանվել որոնողական համակարգում կամ փոխանցվել էլեկտրոնային, մեխանիկական, պատճենահանման, ձայնագրման կամ այլ եղանակով առանց հրատարակչի նախնական գրավոր թույլատվության:

*****

Սույն հրատարակությունում արտահայտված կարծիքները կարող են չհամընկնել ՄՄԿ-ի կամ նրա անդամ-պետությունների պաշտոնական տեսակետների հետ:

*****

**Հրատարակիչ**՝ Միգրացիայի միջազգային կազմակերպություն

**Միգրացիայի միջազգային կազմակերպություն (ՄՄԿ)**
**Հայաստանյան առաքելություն**
Հայաստան • Երևան 0010 • ՄԱԿ-ի գրասենյակ
• Պետրոս Ադամյան փողոց 14, 1-ին հարկ
**Հեռ.**՝ (+374 10) 58 56 92 • 58 37 86 • **Հեռապատճեն**՝ (+374 10) 54 33 65
• **Էլ.փոստ**՝ iom@arminco.com • http://www.iom.int/armenia

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Վիզա Իսպանիա այցելելու համար:
Ընդհանուր հիմնական տեղեկություններ ............................5
2. Միգրացիա զբաղվածության նպատակներով.................6
3. Իսպանիայում ուսանելը.................................................9
4. Կացություն ..................................................................10
5. Ապաստան հայցողներ և փախստականներ..................12
6. Ընտանիքների վերամիավորում...................................13
7. Առողջապահական համակարգը ..................................14
8. Սոցիալական ապահովագրության համակարգը ..........14
9. Բնակարանային պայմաններ .......................................15
10. Օտարերկրյա դիպլոմների և աստիճանների
ճանաչում ..........................................................................15
11. Միգրանտներին առաջարկվող աջակցության
ծառայություններ...............................................................16
12. Քաղաքացիություն .....................................................17

# ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՄԻԳՐԱՆՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ
# ԻՍՊԱՆԻԱ

## 1. Վիզա Իսպանիա այցելելու համար: Ընդհանուր հիմնական տեղեկություններ

ԵՄ պետությունների քաղաքացիներ չհանդիսացող օտարերկրացիները Իսպանիա մուտք գործելու համար պետք է ունենան վիզա: Վիզայի համար, նախքան մեկնելը, կարող եք դիմել ձեր հայրենի երկրում գտնվող Իսպանիայի հյուպատոսություն: Վիզաներով զբաղվում է Իսպանիայի Արտաքին գործերի նախարարությունը (Ministerio de Asuntos Exteriores y de Cooperacign) արտերկրում գտնվող իր դեսպանատների միջոցով:

Կան երեք տիպի վիզաներ, որոնք տրամադրվում են կախված այն բանից, թե որն է Իսպանիա մուտք գործելու նպատակը:
Դիմորդը պետք է դիմի վիզայի համար ըստ իր կարիքների, քանի որ չի կարող մուտք գործել Իսպանիա զբոսաշրջային վիզայով, և հետո դիմել այլ կարգավիճակով գտնվելու համար՝ առանց հայրենիք վերադառնալու և համապատասխան վիզա ձեռք բերելու: Վիզայի տրամադրման գործընթացը կարող է տևել մի քանի շաբաթ՝ կախված յուրաքանչյուր դեպքից: Իսպանիա մուտք գործելու համար գոյություն ունեն չորս տիպի վիզաներ.

- տարանցիկ վիզա. օտարերկրացիներին թույլ է տալիս անցնել Իսպանիայի տարածքով առավելագույնը հինգ օրվա ընթացքում,
- ժամանակավոր գտնվելու վիզա. տրամադրվում է օտարերկրացիներին, ովքեր ցանկանում են գտնվել Իսպանիայում մինչև 3 ամիս՝ վեցամսյա ժամանակահատվածում: Դրանց թվում են՝ Իսպանիայում ուսանելու վիզաներ, և բազմակի գտնվելու վիզաներ, որոնք տրամադրվում են բազմակի անգամներ գտնվելու համար, ընդհանուր առմամբ 90 օր տևողությամբ, մեկ տարվա ընթացքում՝ վեց ամսվա ժամանակահատվածում:
- կացության վիզա (որը կացության թույլտվությունը չէ). սա սկզբնապես տրամադրվում է մեկ տարով և կարող է նորացվել լրացուցիչ երկու տարվա ժամկետով: Ժամկետը լրանալուց հետո կարող եք դիմել մշտական բնակության վիզայի համար, որը պետք է նորացվի յուրաքանչյուր հինգ տարին մեկ: Կացության վիզաները ձեռք են բերվում հատուկ պայմաններով՝ ընտանիքի

վերամիավորման, Իսպանիայում առնվազն մեկ տարի աշխատելու և ապաստանի շնորհման համար: Այս թույլտվությունը թույլ չի տալիս աշխատանքային գործունեություն, ուստի լրացուցիչ կերպով պետք է ձեռք բերվի աշխատանքի թույլտվություն:

Լրացուցիչ տեղեկությունների համար տես` http://www.maec.es/en/Home/Paginas/HomeEn.aspx:

Բոլոր ձևերը կարելի է ձեռք բերել Ներգաղթի և արտագաղթի պետքարտուղարի կայքից` http://extranjeros.mtas.es/:

Դիմորդների բազմաթիվ կատեգորիաներ (օրինականորեն բնակվող քաղաքացիների ընտանիքի անդամներ, ուսանողներ և թոշակառուներ, լրագրողներ և այլն) ևս կարող են ներկայումս ձեռք բերել անվճար վիզաներ:

Որոշ կատեգորիաների անձանց համար, օրինակ, գործարարներ, ուսանողներ և լրագրողներ, փաստաթղթերի պահանջները պարզեցված են: Հաճախ ճամփորդողների որոշակի կատեգորիաների (ներառյալ գործարարները, լրագրողները, ուսանողերը, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները) կտրամադրվի բազմակի մուտքի վիզա` վավերության երկար ժամկետներով, իսկ դիվանագիտական անձնագրեր կրողները կազատվեն վիզայի պարտավորությունից:

## 2. Միգրացիա զբաղվածության նպատակներով

ԵՄ պետությունների քաղաքացիներ չհանդիսացող բազմաթիվ օտարերկրացիներ, ովքեր ցանկանում են աշխատել Իսպանիայում, Իսպանիա մեկնելուց առաջ վիզա ձեռք բերելուց հետո պետք է ձեռք բերեն նաև աշխատանքի թույլտվություն: Վիզայի համար նրանք պետք է դիմեն իրենց հայրենի երկրում գտնվող Իսպանիայի հյուպատոսություն:

Եթե օտարերկրացի դիմորդը գտնվում է Իսպանիայի տարածքում, աշխատանքի թույլտվության համար պետք է դիմի Օտարերկրացիների գրասենյակ (Oficinas de Extranjeros) կամ Աշխատանքի նախարարության նահանգային գրասենյակներ (Delegación Provincial del Ministerio de Trabajo):

Եթե օտարերկրացի դիմորդը չի գտնվում Իսպանիայի տարածքում, աշխատանքի թույլտվության համար պետք է դիմի օտարերկրացի դիմորդի հայրենի երկրում գտնվող Իսպանիայի հյուպատոսություն: Աշխատանքի նահանգային գրասենյակները (Direcciones Provinciales de Trabajo, Seguridad Social y Asuntos Sociales) որոշում են, թե աշխատանքի թույլտվություն պե՞տք է շնորհել, թե` ոչ:

**Կան աշխատանքի թույլտվության տարբեր տեսակներ.**
1) Եթե **օտարերկրացին վարձու աշխատող է.**

- **A տիպի** աշխատանքի թույլտվություն. սեզոնային կամ սահմանափակ ժամկետով աշխատանքի համար (առավելագույն տևողությունը **9 ամիս** է, ներառյալ նորացված թույլտվության ժամկետը):
- **B տիպի սկզբնական** աշխատանքի թույլտվություն: Տրամադրվում է որոշակի մասնագիտությամբ աշխատանքի, գործունեության տեսակի և աշխարհագրական տարածքի համար՝ առավելագույնը **1 տարի** ժամկետով:
- **B տիպի նորացված** աշխատանքի թույլտվություն: Տրամադրվում է այն անձանց, ովքեր ունեն **B տիպի սկզբնական** աշխատանքի թույլտվություն՝ վերջինիս ժամկետը լրանալուց հետո: Այս տիպի աշխատանքի թույլտվությունը իրավունք է տալիս աշխատել տարբեր մասնագիտություններով կամ գործունեության տեսակներով՝ **2 տարի** առավելագույն ժամկետով:
- **C տիպի** աշխատանքի թույլտվություն: Տրամադրվում է այն անձանց, ովքեր ունեն B տիպի նորացված աշխատանքի թույլտվություն՝ վերջինիս ժամկետը լրանալուց հետո: Այս տիպի աշխատանքի թույլտվությունը օտարերկրացի աշխատողին իրավունք է տալիս զբաղվել ցանկացած մասնագիտական գործունեությամբ՝ Իսպանիայի ողջ տարածքում:

2) Եթե օտարերկրացին **ինքնազբաղված է.**

- **D տիպի սկզբնական** աշխատանքի թույլտվություն՝ գործունեության որոշակի տեսակ իրականացնելու նպատակով՝ առավելագույնը **1 տարով:** Իսպանիայի իշխանությունները կարող են սա սահմանափակել որոշակի աշխարհագրական տարածքով:
- **D տիպի նորացված** աշխատանքի թույլտվություն: Տրամադրվում է D տիպի սկզբնական աշխատանքի թույլտվություն ունեցողներին՝ դրա ժամկետը լրանալուց հետո: Թույլ է տալիս իրականացնել մասնագիտական գործունեության տարբեր տեսակներ՝ **2 տարի** առավելագույն ժամկետով: Իսպանիայի աշխատանքի ոլորտի իշխանությունները կարող են սա սահմանափակել որոշակի աշխարհագրական տարածքով և (կամ) գործունեության որոշակի տեսակով:
- **E տիպի** աշխատանքի թույլտվություն: Տրամադրվում է D տիպի նորացված աշխատանքի թույլտվություն ունեցողներին՝ դրա ժամկետը լրանալուց հետո:

- Սա օտարերկրացի աշխատողին իրավունք է տալիս զբաղվել ցանկացած մասնագիտական գործունեությամբ՝ Իսպանիայի ողջ տարածքում՝ **3 տարի** առավելագույնը ժամկետով:

3) Եթե օտարերկրացին **վարձու աշխատող** է կամ **ինքնազբաղված**.

- **F տիպի** աշխատանքի թույլտվություն: Տրամադրվում է Իսպանիայի սահմանների ներսում մասնագիտական գործունեություն իրականացնելու համար՝ պայմանով, որ ամեն օր վերադառնան օտարերկրյա պետության սահմաններից ներս, որտեղ սովորաբար բնակվում են: Տրամադրվում է **5 տարի** առավելագույնը ժամկետով, որից հետո կարող է նորացվել:
- **Մշտական** աշխատանքի թույլտվություն: Օտարերկրացի աշխատողին հնարավորություն է ընձեռում զբաղվել ցանկացած մասնագիտական գործունեությամբ, որի համար ունի պահանջվող որակավորում: C կամ E տիպի աշխատանքի թույլտվություն ունեցողները կարող են ձեռք բերել այս աշխատանքի թույլտվությունը՝ դրանց ժամկետը լրանալուց հետո: Այս աշխատանքի թույլտվությունը պարտադիր է նորացնել ամեն **5 տարին** մեկ:
- **Արտակարգ** աշխատանքի թույլտվություն: Տրամադրվում է ԵՄ պետությունների քաղաքացիներ չհանդիսացող օտարերկրացիներին, ովքեր օգնել են Իսպանիայի տնտեսական և մշակութային առաջընթացին: Օտարերկրացի աշխատողին հնարավորություն է ընձեռում Իսպանիայի ողջ տարածքում զբաղվել ցանկացած մասնագիտական գործունեությամբ, որի համար ունի պահանջվող որակավորում: Պարտադիր է նորացնել ամեն **5 տարին** մեկ:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (Ministerio de Trabajo y Asuntos Sociales) կայքէջը՝ http://www.mtas.es/sec_emi/uk/index.htm:

Բոլոր ձևերը կարելի է ձեռք բերել Ներգաղթի և արտագաղթի պետքարտուղարի կայքից՝ http://extranjeros.mtas.es/:

## Աշխատանքի որոնման կայքեր

http://www.eujobster.com/-4_Spain/.
http://www.jobtoasterspain.com/.
http://spain.jobs.com/.
http://www.recruitspain.com/jobsearch.asp.
http://www.justspain.org/spain/spain-job-search.asp.

# 3. Իսպանիայում ուսանելը

## Կացության թույլտվություններ կրթական նպատակներով

Կրթական նպատակներով ժամանակավոր կացության կարգավիճակ կարելի է ձեռք բերել, եթե ժամկետը վեց ամսից ավելի է: Վեց ամսից պակաս ժամկետով մնացող ուսանողները չեն համարվում ներգաղթածներ, իսկ վեց ամսից ավելի երկար մնացող ուսանողները պետք է ստանան ուսումնական վիզա և գրանցվեն: Իսպանիայի օրենքի համաձայն կրթական նպատակներով կացության թույլտվությունը իրավունք է տալիս նաև ընտանիքի վերամիավորման համար: Ուսանողի կացության քարտը կոչվում է NIE, և ուսանողը, Իսպանիայում գտնվելուց անմիջապես հետո պետք է սրա համար դիմի Իսպանիայի Յանրային ապահովության նախարարություն (Ministerio del Interior)՝ http://www.mir.es/: Այս փաստաթուղթը ուսանողին թույլ է տալիս ապրել Իսպանիայում ուսումնառության ընթացքում, ինչպես նաև թույլ է տալիս ուսանողին ճամփորդել Եվրոմիության բոլոր երկրներում և այն երկրներում, որոնք Իսպանիայի կամ Եվրոմիության հետ ստորագրել են համաձայնագրեր անձանց ազատ տեղաշարժի վերաբերյալ:
Եթե ծագման երկիրը Իսպանիայի հետ չունի փոխադարձ առողջապահական համաձայնագրեր, ապա ուսանողները չեն ընդգրկվում Իսպանիայի սոցիալական ապահովության ցանցում և պետք է Իսպանիայում ունենան մասնավոր առողջապահական ապահովագրություն: ԵՄ պետությունների քաղաքացիներ չհանդիսացող ուսանողներից նաև պահանջվում է ապացուցել, որ իրենք ունեն բավարար տնտեսական միջոցներ՝ Իսպանիայում իրենց կենսապահովման համար: Ուսանողներին կարող է թույլ տրվել կես դրույքով աշխատել, սակայն սա համարվում է բացառիկ, և նրանք պետք է ձեռք բերեն աշխատանքի թույլտվություն: Բացի դրանից, նրանք պետք է ապացուցեն Իսպանիայի իշխանություններին, որ իրենց գործունեությունը համատեղելի կլինի իրենց ուսման հետ, և այն եկամուտը, որ նրանք ստանում են, անհրաժեշտ չէ Իսպանիայում իրենց ապրելու և մնալու համար: Նախքան աշխատել սկսելը ուսանողները պետք է լիազորություն ստանան Օտարերկրացիների գրասենյակից (Oficinas de Extranjeros) կամ Աշխատանքի պետական գրասենյակներից (Delegaciones o subdelegaciones del Gobierno, nrea de Trabajo y Asuntos Sociales), և նրանցից կպահանջվի ներկայացնել որոշ փաստաթղթեր, օրինակ, ուսանողական տոմս և աշխատանքային պայմանագիր:
Բոլոր ձևերը կարելի է ձեռք բերել Ներգաղթի և արտագաղթի պետքարտուղարի կայքից՝ http://extranjeros.mtas.es/:

**Իսպանիայի ութ առաջատար համալսարանների ցանկը**
Մադրիդի ինքնավար համալսարան (Universidad Autónoma Madrid)՝ http://www.uam.es/:
Բարսելոնայի համալսարան (Universitat de Barcelona)՝ http://www.ub.es/homeub/en/:
Universidad Complutense de Madrid)՝ http://www.ucm.es/:
Բարսելոնայի եվրոպական համալսարան (European University Barcelona)՝ http://www.euruni.edu/scripts/index.aspx?idz=1:
Բարսելոնայի ինքնավար համալսարան (Universitat Autònoma de Barcelona)՝ http://www.uab.es/:
Նավարայի համալսարան (Universidad de Navarra)՝ http://www.unav.es/:
Universitat Pompeu Fabra՝ http://www.upf.edu/english/web/:
Վալենսիայի համալսարան (Universitat de Valencia)՝ http://www.uv.es/~webuv/ingles/index.htm:

# 4. Կացություն

Իսպանիայում ԵՄ պետությունների քաղաքացիներ չհանդիսացող անձանց կացությունը կարգավորվում է «Օտարերկրացիների մասին ակտով»՝ Ներքին գործերի նախարարության պատասխանատվության ներքո: ԵՄ պետությունների քաղաքացիներ չհանդիսացող օտարերկրացիները Իսպանիայի տարածքում բնակվելու համար պետք է ստանան կացության թույլտվություն:
Իսպանիայի տարածք մուտք գործելու համար պահանջվում է ցույց տալ վավեր անձնագիր և համապատասխան վիզա: **90 օրը** գերազանցող ժամկետից հետո Իսպանիայում մնալու համար անհրաժեշտ է ձեռք բերել կա՛մ երկարաձգում, կա՛մ կացության թույլտվություն:
Գոյություն ունեն կացության թույլտվությունների տարբեր **տիպեր**.

- **Ժամանակավոր կացության թույլտվություն,** որը թույլ է տալիս մնալ Իսպանիայում 90 օրից մինչև 5 տարի ժամկետով: Սահմանված ժամկետը լրանալուց հետո կացության թույլտվությունը կարող է նորացվել:
- **Մշտական կացության թույլտվություն**: Սա տրամադրվում է այն օտարերկրացիներին, ովքեր ունեցել են սովորական կացության թույլտվություն 5 տարի անընդմեջ ժամկետով: 5 տարուց հետո պետք է նորացվի:
- **Կացության թույլտվություն հատուկ հանգամանքների համար**, օրինակ, ԵՄ պետությունների քաղաքացիներ չհանդիսացող օտարերկրացիների, ովքեր «համարվում են տեղափոխված»,

ինչպես նաև ԵՄ պետությունների քաղաքացիներ չհանդիսացող օտարերկրացիների, որոնց ապաստանի դիմումը մերժվել է և ում Իսպանիայի Ներքին գործերի նախարարությունը արտոնել է մնալ Իսպանիայում:

- **Կացության թույլտվություն ընտանիքների վերամիավորման համար:** Այս թույլտվությունը իրավունք է տալիս Իսպանիայում բնակվող ԵՄ պետության քաղաքացի չհանդիսացող օտարերկրացուն դիմել իր ընտանիքի մերձավորագույն անդամների՝ Իսպանիայում կացության համար: Դիմորդը պետք է օրինական կերպով բնակված լինի Իսպանիայում առնվազն մեկ տարի և ունենա Իսպանիայում ևս մեկ տարի բնակվելու լիազորություն:

Կացության թույլտվության **դիմումները** պետք է ներկայացնել անձամբ՝ Օտարերկրացիների գրասենյակ (Oficina de Extranjeros) կամ այն քաղաքին ամենից մոտ գտնվող օտարերկրացիների վարչության Ազգային ոստիկանության բաժանմունք, որտեղ դիմորդը պատրաստվում է ապրել: Դիմորդից կպահանջվի ներկայացնել որոշ փաստաթղթեր՝ կախված կացության թույլտվության տեսակից, որի համար ներկայացվում է դիմումը: **Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Իսպանիայի դեսպանատուն կամ Անդամ Պետության հյուպատոսության աշխատակիցներին**:

Կացության թույլտվությունների **նորացումներ** տրամադրվում են՝ պայմանով, որ ԵՄ պետության քաղաքացի չհանդիսացող օտարերկրացու ո՛չ անձնական, ո՛չ տնտեսական իրավիճակները չեն փոխվել: Նորացումները տրամադրվում են կացության թույլտվության ժամկետը լրանալուց առնվազն մեկ ամիս առաջ, այլապես օտարերկրացին կարող է տուգանվել: Կացության թույլտվությունները **տրամադրվում են** Իսպանիայի ներքին գործերի նախարարության (Ministerio del Interior) կողմից՝ http://www.mir.es/:

Դուք պետք է ձեր կացության քարտը մշտապես պահեք ձեզ մոտ, քանի որ դա իրենից ներկայացնում է Իսպանիայում բնակվող օտարերկրացիների ինքնությունը հաստատող պարտադիր փաստաթուղթ:

Բոլոր ձևերը կարելի է ձեռք բերել Ներգաղթի և արտագաղթի պետքարտուղարի կայքից՝ http://extranjeros.mtas.es/:

# 5. Ապաստան հայցողներ և փախստականներ

Եվրոպական այլ երկրների հետ համեմատած Իսպանիան ունի բնակչության մեկ շնչին ընկնող ապաստան փնտրողների ամենացածր ցուցանիշներից մեկը, ինչպես նաև ապաստանի տրամադրման վերաբերյալ կայացվող դրական որոշումների ամենացածր ցուցանիշը: Ապաստանի իրավունքը ամրագրված է Իսպանիայի 1978 թ. Սահմանադրությամբ՝ հաշվի առնելով Փախստականների կարգավիճակի ճանաչման մասին 1951 թ. Ժնևի Կոնվենցիան: Ապաստանի դիմորդները կարող են դիմում ներկայացնել Ներքին գործերի նախարարության ապաստանի և փախստականների վարչություն (OAR)՝ http://www.mir.es/, սահմանային ոստիկանություն կամ երկրի ներսում: Բացի դրանից, ապաստանի հայցադիմումները կարելի է ներկայացնել արտերկրում **Իսպանիայի դիվանագիտական և հյուպատոսական առաքելություններում**: Դիմորդները պետք է ներկայացնեն իրենց ինքնության ապացույց և հետապնդումը հաստատող արժանահավատ քաղվածք: Ընդունելի դիմումները OAR-ի կողմից ուղարկվում են Ապաստանի և փախստականների հարցերի միջգերատեսչական հանձնաժողով (CIAR): Յանձնաժողովի կազմի մեջ մտնում են Ներքին գործերի, Սոցիալական հարցերի և Արտաքին գործերի նախարարությունները ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի (ՄԱԿ ՓԳՅ) գրասենյակի հետ միասին, որը հանդես է գալիս որպես խորհրդատու:

Իսպանիայի ապաստանի տրամադրման ընթացակարգը տարբերակում է սահմանի մոտ ներկայացված ապաստանի դիմումներ և երկրի ներսում ներկայացված ապաստանի դիմումներ: Երկու դեպքերում էլ որոշումները կայացվում են CIAR-ի կողմից դիմումը ներկայացվելուց հետո վեց ամսվա ընթացքում՝ հաշվի առնելով CIAR-ի տեղեկությունների թղթապանակը և ՄԱԿ ՓԳՅ-ի և հասարակական կազմակերպությունների հանձնարարականները (խորհուրդները): Այն ընթացքում, երբ դիմումը քննության է առնվում, կարող են տրամադրվել մի քանի իրավունքներ, օրինակ, աշխատանքի և կացության թույլտվություններ, թեպետ սա արվում է միայն բացառիկ դեպքերում: Խոցելի խմբերին աջակցում է Տարեցների և սոցիալական ծառայությունների ինստիտուտը (Instituto de Mayores y Servicios Sociales՝ IMSERSO): Սահմանի մոտ տրված դիմումների դեպքում նախատեսվում են արագացված վարույթ ընդունելու կարգ, երբ երեք օրվա ընթացքում կայացվում է սկզբնական որոշումը: Վարույթի ընդունման դրական ելքի դեպքում կայացվում է որոշում փախստականի պաշտպանություն տրամադրելու, մարդասիրական կամ տեղահանված անձի կարգավիճակի վերաբերյալ, և տրամադրվում է կացության կարգավիճակ: Եթե ապաստանի

հայցադիմումը մերժվում է, անձն իրավունք ունի մեկ օրվա (24 ժամվա) ընթացքում պահանջելու ապաստանի դիմումի վերաքննություն, ինչի մասին որոշումը կայացնում է Ապաստանի գրասենյակը 48 ժամվա ընթացքում: Այն դեպքերում, երբ դիմումը մերժվում է, մուտքը Իսպանիայի տարածք կարող է թույլատրվել, եթե ՄԱԿ ՓԳՀ-ն պաշտպանում է ապաստանի դիմումը: Հնարավոր է նաև բողոքարկել Ազգային բարձրագույն դատարան՝ երկամսյա ժամկետի ընթացքում:
Բացասական որոշման դեպքում Իսպանիայի իշխանությունները կարող են մերժել և վտարել ապաստանի դիմորդին՝ հաշվի առնելով Ժնևի Կոնվենցիան: Երկրի ներսում ներկայացված ապաստանի դիմումների մասին որոշում կայացվում է 60 օրվա ընթացքում: Այն բանից հետո, երբ ապաստանի դիմումը ներկայացված է, ապաստան հայցողներն իրավունք ունեն օգտվելու թարգմանների, իրավախորհրդատուների ծառայություններից և բժշկական աջակցությունից: Սա գործում է նաև սահմանի մոտ դիմում ներկայացնելու դեպքում: Դիմորդները կարող են մնալ Իսպանիայում մինչև 60 օր, մինչև նրանց դիմումի վերաբերյալ որոշման ընդունումը: Դիմումը վարույթ չընդունելու մասին պետք է ծանուցվի դիմորդին որոշում կայացնելու օրվանից հետո չորս օրվա ընթացքում: Բացասական որոշման դեպքում, ներառյալ հնարավոր բողոքարկումը, անձը պետք է թողնի երկիրը 15 օրվա ընթացքում, սակայն կպահպանի մարդասիրական պաշտպանության համար դիմելու իրավունքը:
Բոլոր ձևերը կարելի է ձեռք բերել Ներգաղթի և արտագաղթի պետքարտուղարի կայքից՝ http://extranjeros.mtas.es/:

# 6. Ընտանիքների վերամիավորում

Իսպանիայում ընտանիքների վերամիավորման ընթացակարգը խստացվել է: Դիմորդը պետք է ապրի Իսպանիայում առնվազն մեկ տարի, ունենա Իսպանիայում կամ մեկ այլ ԵՄ երկրում տրամադրված երկու տարով վավեր կացության թույլտվություն՝ ընտանիքի վերամիավորման հայցով դիմելու համար: Դիմորդը (Իսպանիայի քաղաքացի չհանդիսացող), որը ձեռք էր բերել կացության թույլտվություն ընտանիքի վերամիավորման միջոցով, ունի ընտանիքի վերամիավորման իրավունք՝ անկախ կացության թույլտվություն և աշխատանքի թույլտվություն ձեռք բերելուց հետո (հինգ տարվա կացությունից հետո) և կենսապահովման բավարար միջոցներ ցույց տալուց հետո: Ընտանիքի վերամիավորման հիմքով կացության թույլտվությունները տրամադրվում են Իսպանիայի Ներքին գործերի նախարարության կողմից (Ministerio del Interior)՝ http://www.mir.es/:

Բոլոր ձևերը կարելի է ձեռք բերել Ներգաղթի և արտագաղթի պետքարտուղարի կայքից՝ http://extranjeros.mtas.es/:

## 7. Առողջապահական համակարգը

Իսպանիայի պետական տարածքում առողջության պահպանման և առողջապահական սպասարկումից օգտվելու իրավունքներ ունեն Իսպանիայի բոլոր քաղաքացիները և օտարերկրացիները, ինչպես նաև ԵՄ Անդամ Պետություններ չհանդիսացող երկրների քաղաքացիները, որոնց իրավունքները ճանաչվում են համապատասխան օրենքներով, դաշնագրերով և կոնվենցիաներով: Ծառայությունների հասանելիությունը ձեռք է բերվում անձնական առողջապահական քարտը ներկայացնելով, որը տրամադրում է համապատասխան առողջապահական վարչությունը: Այս փաստաթուղթը յուրաքանչյուր քաղաքացու սահմանում է որպես ողջ ազգային առողջապահական համակարգից օգտվողի: Առողջապահությունը Իսպանիայում **մուծումների վրա չհիմնված նպաստ է**: Վճարումները կատարվում են հարկման միջոցով, և համակարգն ընդգրկվում է յուրաքանչյուր ինքնավար համայնքի ընդհանուր բյուջեում: Կան նաև երկու լրացուցիչ հիմնադրամներ՝ կապակցման հիմնադրամը, որը վարում է Առողջապահության և սպառողների հարցերի նախարարությունը, և ժամանակավոր անաշխատունակության խնայողությունների ծրագիրը: Լրացուցիչ տեղեկությունների համար տես Առողջապահության և սպառողների հարցերով նախարարության կայքէջը՝ http://www.msc.es/en/organizacion/ministerio/home.htm. Նկատի ունեցեք, որ այստեղ տեղեկությունների մեծ մասը իսպաներեն լեզվով է:

## 8. Սոցիալական ապահովագրության համակարգը

Իսպանիայի Սահմանադրության համաձայն պետական իշխանությունները պահպանում են սոցիալական ապահովության պետական համակարգ բոլոր քաղաքացիների համար, որը **կերաշխավորի սոցիալական աջակցություն և ծառայություններ**, որոնք կարիքի դեպքում բավարար կլինեն: Լրացուցիչ աջակցությունը և ծառայություններն անվճար են: Իսպանիայի սոցիալական ապահովության համակարգն **ընդգրկում է** Իսպանիայում կացության թույլտվություն ունեցող օտարերկրացիներին: Պաշտպանությունն ընդգրկում է նաև ապահովագրված անձի ընտանիքը: Իսպանիայի

սոցիալական ապահովության մուծումներն սկսվում են ոչ թե այն ժամանակ, երբ դուք ձեռք եք բերում կացության քարտ, այլ՝ երբ սկսում եք աշխատել Իսպանիայում: Իսպանիայի սոցիալական ապահովության համակարգը ներառում է **առողջապահական նպաստներ** (հիվանդություն և մայրություն), **աշխատանքի ժամանակ ստացած վնասվածքների, գործազրկության նպաստներ, կենսաթոշակներ, հաշմանդամության և մահվան** նպաստներ: Սոցիալական ապահովության համար դիմումների ձևերը կարելի է ձեռք բերել Սոցիալական ապահովության կենտրոնական գանձապետարանից:
Լրացուցիչ տեղեկություններ կարելի է ձեռք բերել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (Ministerio de Trabajo y Asuntos Sociales) կայքէջում՝ http://www.seg-social.es/Internet_6/index.htm: Ծանոթություն. տեղեկությունների մեծ մասն առկա է անգլերեն լեզվով, սակայն որոշ հատվածներ առկա են միայն իսպաներեն լեզվով:

## 9. Բնակարանային պայմաններ

http://www.sublet.com/State_Rentals/Spain_Rentals.asp:
http://www.apartments-spain.com/:
http://www.gomadrid.com/apartments/:
http://www.rentalspain.com/:

## 10. Օտարերկրյա դիպլոմների և աստիճանների ճանաչում

Ուսանողները, ովքեր ավարտել են իրենց ուսումը արտերկրի որևէ համալսարանում կամ բարձրագույն ուսումնական հաստատությունում և ցանկանում են ուսումը շարունակել Իսպանիայի որևէ համալսարանում, կարող են՝ (i) կա՛մ դիմել հաստատելու իրենց աստիճանը որպես Իսպանիայի համալսարանի պաշտոնական որակավորում, կամ (ii) դիմել՝ իրենց կրթությունը ճանաչելու որպես Իսպանիայի համապատասխան կրթության համարժեք:
Ուսանողները պետք է տեղյակ լինեն, որ նշված երկու ընթացակարգերը չեն կարող ձեռնարկվել միաժամանակ: Արտերկրում շնորհված աստիճանի հաստատման դիմումները պետք է ուղարկվեն Ակադեմիական որակավորումների, ճանաչումների և հաստատումների վարչություն հետևյալ հասցեով. Պասեո դել Պրադո, 28 – 28014 Մադրիդ, հեռ.՝ (34) 917 018 500) (Paseo del Prado, 28 - 28014 Madrid; Tel. (34) 917 018 500):

# 11. Միգրանտներին առաջարկվող աջակցության ծառայություններ

**Իսպանիայի Թագավորություն**
**Վալենսիա**
Պրն Լուիս Բարբերա Զապատերո
Պատվավոր հյուպատոս
Պրն Միեր Բադալյան
Երրորդ քարտուղար
Regne de Valencia,14-4, Valencia, Spain
Հեռ.՝ (34) 963162475, Ֆաքս՝ (34) 963738059
Էլ. փոստ՝ consulenvalencia@mail.ru

**Ներգաղթի և արտագաղթի պետական քարտուղարություն** (Secretaria de Estado de Inmigración y Emigración)՝ http://extranjeros.mtas.es/

**«Փախստականների իսպանական հանձնաժողով» ÐÎ** (Comisión Española de Ayuda al Refugiado (CEAR)՝ http://www.cear.es/home.php

**«Խաղաղության հետազոտությունների կենտրոն» ÐÎ** (Centro de Investigación para la Paz (CIP)՝
http://www.fuhem.es/cip-ecosocial/

**Ռասիզմի և քսենոֆոբիայի (այլատյացություն, օտարավախություն) դեմ պայքարի, ներգաղթածներին իրավաբանական օգնության ցուցաբերման կազմակերպություն**
(Sosrasizmo): www.sosracismo.org
Հեռախոս՝ +34 944790310

**Չորրորդ աշխարհ. ներգաղթածների ինտեգրում, կրթություն և մարդու իրավունքներ**
www.cuartomundo.es
Հեռախոս՝ +34 914481445

**Asociación Amanecer,** R&A de ayuda al imigrante
**Almeria:** c/Granada, 190 en: Almería 04008 (Almeria) (España)
Հեռ.՝ 950254453, Էլ. փոստ՝ amaneceralmeria@yahoo.es

**Իսպանիայի Արտաքին գործերի նախարարություն** (Ministerio de Asuntos Exteriores y de Cooperación)՝
http://www.maec.es/en/Home/Paginas/HomeEn.aspx

**Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն** (Ministerio de Trabajo y Asuntos Sociales)՝ http://www.segsocial.es/Internet_6/index.htm

**Իսպանիայի Ներքին գործերի նախարարություն** (Ministerio del Interior)՝
http://www.mir.es/

**Առողջապահության և սպառողների հարցերով նախարարություն**
(Ministerio de Sanidad y Consumo)՝
http://www.msc.es/en/organizacion/ministerio/home.htm

**Միգրացիայի Միջազգային Կազմակերպության (ՄՄԿ) Իսպանիայի գրասենյակ**
Fernando el Católico, 10 - 1º A
28015 Madrid
Հեռ.՝ +34.9 144 57 11 6
Ֆաքս՝ +34.9 159 43 28 3

**Իսպանական Կարմիր խաչի ընկերություն**
Հասցե՝ Avda. Reina Victoria 26, 28003, Madrid
Հեռ.՝ (34) (91) 335 44 44 / 91 522 22 22 (Արտակարգ իրավիճակներում) / 91 335 45 45
Ֆաքս՝ (34) (91) 335 44 55 / 91 335 45 55 (Արտակարգ իրավիճակներում)
Էլ. փոստ՝ *informa@cruzroja.es*
Կայքէջ՝ *http://www.cruzroja.es/*
Թղթակցության լեզուն՝ իսպաներեն:

## 12. Քաղաքացիություն

Իսպանիայի քաղաքացի չհանդիսացող անձինք կարող են ձեռք բերել Իսպանիայի քաղաքացիություն «Քաղաքացիական ակտի» համաձայն, որը փոփոխության է ենթարկվել 36/20028 օրենքով 2002 թ. հոկտեմբերի 8-ին: Օտարերկրացիների կողմից Իսպանիայի քաղաքացիություն կարող է ձեռք բերվել տարբեր կերպ:

- Ծնունդով: Իսպանիայում ծնված յուրաքանչյուր երեխա, որի ծնողները օտարերկրացիներ են և որի հայրը կամ մայրը ծնվել է

Իսպանիայում, կամ Իսպանիայում ծնված յուրաքանչյուր երեխա, որի ծնողները քաղաքացիություն չունեցող անձինք են:

- Բնակությամբ: Իսպանիայի քաղաքացիության համար դիմելու հիմնական պահանջը Իսպանիայում **10 տարի** անընդմեջ կացության ժամանակահատվածն է: Սա տարբեր է այն անձանց համար, ում տրամադրվել է ապաստան, որի դեպքում կպահանջվի **5 տարվա** կացություն: Սեֆարդ հրեաներից (15-րդ դարի ավարտին Իբերական թերակղզու հրեաների վտարումից առաջ նրանցից ծագած հրեաներ) կպահանջվի **2 տարվա** կացություն: **Կացության ժամկետը կրճատվում-հասցվում է 1 տարվա Իսպանիայում ծնված այն անձանց համար**, ում ծնողները Իսպանիայում օրինական կարգով բնակվող օտարերկրացիներ են:
- Իսպանացու **ամուսնու (կնոջ)** համար:
- Այն անձանց համար, ովքեր **չեն դիմել** Իսպանիայի քաղաքացիություն ստանալու համար՝ որպես այլընտրանքային տարբերակ Իսպանիայի քաղաքացիություն ձեռք բերելու համար սահմանված **օրինական ժամկետում**:
- **Այրիացած Իսպանիայի քաղաքացու** համար, պայմանով, որ ամուսնու (կնոջ) մահվան ժամանակ ամուսինները բաժանված չեն եղել:
- Օտարերկրացու համար, որի հայրը, մայրը, պապը կամ տատը եղել են **Իսպանիայի քաղաքացիներ ծնունդով կամ կացությամբ: Երկակի քաղաքացիությունը** չի ճանաչվում Արևմտյան Բալկանյան երկրներից ժամանած միգրանտների համար:

Իսպանիայի քաղաքացիության հայցով դիմելու **պաշտոնական դիմումի** ձևերը պետք է ներկայացվեն այն քաղաքի Քաղաքացիական ռեգիստր, որտեղ ապրում է դիմորդը: